ՋՈՒՐԸ ՀԱՅՈՑ ՀԱԽԱՏԱԼԻՔՆԵՐՈՒՄ ԵՒ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՂ ԾԷՍԵՐՈՒՄ

ՎԱՉԱԳԱՆ ԱԽԱԳԵԱՆ
avagyan.vachik@yandex.ru

ՄՈՒՏՔ

Կենսական անհրաժեշտութեան պատճառով ջուրը միշտ համարուել է կեանքի գոյութեան սկզբնաղբիւր: Հին յոյն փիլիսոփայ Արիստոտէլն այն դասել է բնութեան չորս հիմնական տարրերի (կրակ, օդ, հող, ջուր) շարքը: Հնում, ջրի կենսապարգեւ բնական յատկանիշների շնորհիւ, առանձնայատուկ հմայական ուժ եւ յատկութիւն է վերագրուել նրան: Պատահական չէ, որ դեռ վաղնջական ժամանակներից այն եղել է նաեւ պաշտամունքի առարկայ, հիմք ու աղբիւր է դարձել սնոտի ու առասպելական հարուստ ու բազմազան հաւատալիքների համար: Իբրեւ մաքրութեան խորհրդանիշ՝ հնուց իվեր մաս է կազմել կրօնական տարբեր արարողութիւնների, որոնք, յարատեւելով տարբեր դարաշրջաններում ու փոխակերպուելով կրօնական տարբեր պատկերացումներից, հասել են մինչեւ մեր օրերը: «*Կենաց տնտեսութեան մէջ որքան անհրաժեշտ կարեւոր է ջուրն, աւելի քան զկրակ, գոնէ քան զայս պակաս պաշտելի կամ պատուելի պիտի չըլլար ի նիւթապաշտից, եւ այնպէս եղած է առ այլ եւ այլ ազգս, որք ծովեր, գետեր, աղբիւրներ աստուած կամ աստուածային ճանչցեր են*»[1]՝ գրում է Հայր Ղեւոնդ Ալիշանը:

Ջրի պաշտամունքը էական տեղ է զբաղեցրել նաեւ հայերի մօտ[2]: «*Այլ կերպ չէր էլ կարող լինել,*- գրում է Արամ Ղանալանեանը եւ բացատրում.- *յայտնի է, որ Հայաստանի շատ շրջաններ իրենց ցամաքային կլիմայի պատճառով միշտ մեծ պակաս են զգացել մթնոլորտային տեղումների: Ջուրն այստեղ անհրաժեշտ է եղել ոչ միայն մարդկանց հիմնական բնակութեան սահմաններից հեռու լեռնավայրերում, ուր զբաղուել են անասնապահութեամբ, այլեւ նախալեռներում ու դաշտավայրերում, ուր ժողովրդի պարապմունքի գլխաւոր առարկան եղել է երկրագործութիւնը: Ջրի գոյութեամբ է պայմանաւորուել մի դէպքում անասունների, արօտավայրերի, միւս դէպքում էլ մարդկանց ապրուստի հարցը*»[3]:

Ջրի վերոյիշեալ դերը երկրի ու ժողովրդի տնտեսութեան ու կենցաղի համար բնականաբար իր անջնջելի հետքը պէտք է

թողնէր հայ ժողովրդի մտածողութեան վրայ, եւ ամէնեւին պատահական չէ, որ հայկական հաւատալիքների եւ առհասարակ հայ ժողովրդական բանահիւսութեան մէջ բազմիցս է յիշատակւում ջուրը: Ջրի պաշտամունքն արտայայտւում է առասպելներում, աւանդութիւններում, ծիսական արարողութիւններում, անէծքներում, օրհնանքներում եւն.: Հայ ժողովրդի մօտ, ջրի մասին կան տարածուած բազմաթիւ առածներ ու ասացուածքներ, որոնց մեծ մասն ունի այլաբանական իմաստ[4]:

ԱՌԱՍՊԵԼՆԵՐ

Մանուկ Աբեղեանը, Արա Գեղեցիկի յարութեան կապակցութեամբ ներկայացնելով Լէգք Գիւղի մասին զրոյցը, հակիրճ շարադրում է նաեւ վերջինիս հնագոյն տարբերակը, որը Դերկետո դիցուհու մասին պատմող առասպելն է[5]: Այստեղ ասւում է, որ իր դստեր՝ Շամիրամի ծնուելուց յետոյ յանցաւոր սիրոյ համար Դերկետոն ձուկ է դառնում: Այնուհետեւ Աբեղեանը հաւաստում է, որ Դերկետոն պաշտուել է որպէս ջրի աստուածուհի, որի սրբազան կենդանիներն են եղել աղաւնին եւ ձուկը: Շամիրամին են փոխանցուել մօր յատկանիշները. «*Նրա տօնի օրերը ջուր էին բերում նրա տաճարը եւ սրսկում,*- հաւաստում է Աբեղեանը,- *Շամիրամին իրեն ասորեստանցիները պաշտում էին աղաւնու ձեւով. եւ պատմում էին, թէ աղաւնիներ են սնուցել նրան: Այս ամէնը յիշեցնում է մեր Վարդավառին (որ Անահիտ կամ Աստղիկի տօնն է համարւում) ջուր սրսկելը եւ աղաւնի բաց թողնելը, մի սովորութիւն, որից երեւում է, որ մեզանում եւս այդ աստուածուհուն նուիրական են եղել աղաւնին եւ ջուրը: «Սուրբ թոնրի», ջրի ու ձկան պաշտամունքը, որ իսկապէս հեթանոսական է եւ ոչինչ չունի քրիստոնէութեան հետ հարկաւ նոր չէ եւ գալիս է շատ հին հեթանոսական ժամանակներից*»[6],- եզրակացնում է նա:

Միմեանց վրայ ջուր ցօղելու կրօնապաշտամունքային հեթանոսական արարողութիւնը, որ սկզբնապէս նպատակ է ունեցել ներգործելու բնութեան վրայ, հետեւելով մարդու օրինակին, ստիպել վերջինիս, որ պտղաբերութիւն ապահովելու համար անձրեւ տեղացնի դաշտերի ու արտերի վրայ[7]: Յետագայում քրիստոնէական եկեղեցին իր ծիսակարգում համադրուել է Քրիստոսի Պայծառակերպութեանը՝ Թաբոր Լեռան վրայ՝ պահպանելով ոչ միայն տօնի հին անունը՝ Վարդավառ, այլեւ

այն ծէսերն ու արարողութիւնները, որ կատարուել են նրա ժամանակ՝ յարմարեցնելով դրանք (աղաւնի բաց թողնելը, յատկապէս ջուր ցողելը) համաշխարհային ջրհեղեղի եւ նոյեան աղաւնու հետ, իսկ Աստղիկ դիցուհուն էլ դարձրել է Նոյի դուստրը՝ կրօնական տեսակէտից օրինականացնելով նրա հեթանոսական պաշտամունքի պահպանումը ժողովրդական արարողութիւններով[8]:

Յայտնի է նաեւ, որ հայերի մօտ նշանաւոր է եղել Վահագնը՝ որպէս ամպրոպի աստուածութիւն, որ կռուել է վիշապների դէմ: Նա համարւում է երկնային ջրերի՝ ծովի ծնունդ[9]: Աբեղեանը գրում է. «*...Հայկական ժողովրդական հաւատալիքների մէջ եւս կայծակի աստուածութիւնը կապւում է ծովի հետ, իբրեւ ծովի սերունդ: Միւս կողմից... ծովածին է մեր արդի ժողովրդական վէպի մէջ կայծակի կամ ամպրոպային հերոս Սանասարը: Նրա մայրը յղանում է նրան եւ նրա եղբօրը ծովի ջրից, եւ նա իր այդ ծագումը նկատի ունենալով՝ իրեն անուանում է* ***Ծովային****, ունի կայծակի թուր, որ ստացել է ծովից. ունի ամպրոպային առասպել, կռուելով վիշապի դէմ եւ կռուի մէջ հողմ յարուցանելով ու անձրեւելով: Նրա մօր անունն է Ծովեալ կամ Ծովինար*»[10]: Մի ուրիշ տեղ, նախ «Ծովեալ» անունը դիտարկելով որպէս «Ծովեան» անուան աղճատուած տարբերակ, Աբեղեանը գրում է. «*Ծովեան» բառը սկզբնապէս եղել է ամպրոպային կամ կայծակի աստուածութեան մականունը, որ ցոյց է տուել նրա ծովային ծագումը: Յետագայում այդ մականունը Ծովեան, այլեւ Ծովինար ձեւով, դարձել է մի նոյնպիսի աստուածութեան կամ աստուածուհու անուն: Ապա եւ պատահական չէ, որ վէպի մէջ* (*Սասնայ Ծռեր* - Վ.Ա.) *կայծակի աստուածուհու այդ անուններով կոչուել է հենց ամպրոպային կամ կայծակի հերոսի մայրը*»[11]:

Արդարեւ, հայ ժողովրդական դիւցազնավէպի մէջ էական տեղ է զբաղեցնում ջուրը: Այսպէս, *Սասնայ Ծռեր* դիւցազնավէպի նախնի հերոսները պատումների մեծ մասում ծագում են ծովից կամ ջրից[12], ջուրը նրանց տարրն է. «*Դուք ջրից էք բահամ եկել (գոյացել), դուք ֆերզի ազգ էք, ձեր բանը զոռով է*»՝ ասում Սանասարի եւ Բաղդասարի մայրն իր որդիներին[13]: Ջուրը հերոսներին նաեւ օժտում է ուժով, ջուր խմելով՝ նրանք արագ աճում-մեծանում են, զօրանում, ջրի մէջ լողանալով՝ ապաքինում վէրքերը ու նորովի կորով առնում[14]: Պատումներից մէկում, երբ պատանի Սանասարն

ու Բաղդասարը մօր եւ քահանայի հետ գնում են Աղթամար, Սանասարը հեռում տեսնում է Առտեր կղզին: Նա լողալով հասնում է կղզի եւ տեսնում, որ այնտեղ մի եկեղեցի կայ: Մտնում է ներս, քունը տանում է: Երազում գալիս է Աստուածածինը եւ յայտնում Սանասարին, որ կղզում մի քարայր կայ, որտեղ բազմաթիւ զէնք ու զրահ կայ պահուած: Առաջարկում է վերցնել դրանք, ապա ծովափին գտնուող քարի տակից հանել սանձը, կախել ծովի մէջ եւ քաշել, որտեղից ծովային մի ձի դուրս կը գայ՝ անունը Քուռկիկ Ջալալի: Աստուածածինը Սանասարին նաեւ ասում է, որ դարպասի մօտ ջուր կայ, առաջարկում է նրան լողանալ այդ ջրով, շնորհիւ որի նա կը հզօրանայ, կը կտրիճանայ: Սանասարն արթնանում է, կատարում է Աստուածածնի պատգամը ու դառնում կտրիճ, զինավառուած հեծնում Քուռկիկ Ջալալին ու դուրս գալիս կղզուց[15]: Վիպական այս միջադէպը, որ վէպի հերոսների համար ունի ելակէտային նշանակութիւն (հերոսների՝ ջրից հզօրանալը, հրեղէն ձի ու կայծակ թրի, զէնք ու զրահի ձեռքբերումը, դրանց ժառանգաբար փոխանցումը սերնդից սերունդ), տիպաբանօրէն մօտաւորապէս նոյնն է դիւցազնավէպի պատումների մեծ մասում: Մի ուրիշ տեղ էլ դիւցազնավէպում ասւում է, որ Ձէնով Յովանը Դաւթին խորհուրդ է տալիս. «*Կաթնաղբիւրի վրայ իջիր, քնիր, շնորհք Աստծուց կ'առնես*»: Եւ Դաւիթը ջուրը խմում է ու քնում եւ «*շնորհք Աստուծուց առաւ*», այսինքն՝ հսկայամարմին դարձաւ[16]: «*Ջրի այս հրաշագործ զօրութեան մէջ կայ երկու կողմ,*- գրում է Աբեղեանը.- *մէկ որ, ինչպէս վէպն ինքը բացատրում է, որովհետեւ մեր դիցազները ջրից են գոյացել, ջուրը նրանց տարրն է, ուստի եւ կենդանութիւն է տալիս նրանց. մէկ էլ ընդհանրապէս հեթանոսական հաւատալիք է դա, որ ցարդ եւս մեր ժողովրդի մէջ ... տեղ-տեղ մնում է: Այդ հին հաւատքով ջուրը, յատկապէս աղբիւրի ջուրը, բոյսերի հետ միասին, տալիս է ողջութիւն եւ առողջութիւն, երկար կեանք եւ մինչեւ իսկ անմահութիւն: Այդ պատճառով եւ ջրի մակդիրն է անմահական, անմահութեան*»[17]:

ՋՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐԸ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Ջրի պաշտամունքը էական տեղ է զբաղեցնում նաեւ հայկական բնաշխարհին եւ հաւատալիքներին նուիրուած ժողովրդական

աւանդութիւնների մէջ: «…*Ջուրը վաղնջական դարերից դարձել է Հայաստանի բնակչութեան յոյսի, յուսահատութեան, ուրախութեան, վշտի, երազանքների ու կրօնական պաշտամունքի կարեւորագոյն առարկաներից մէկը*»[18՝] գրում է Ղանալանեանը եւ հայ ժողովրդի կողմից ստեղծած՝ երկրի լեռնային լճերին, գետերին, վտակներին, առուներին ու աղբիւրներին վերաբերող բազմաթիւ աւանդութիւնների օրինակներ բերում, որոնց մի զգալի մասը հայոց մօտ ժամանակին գոյութիւն ունեցող ջրի պաշտամունքի վերապրուկներից են[19]: Օրինակ[20], Տաւուշի մարզում՝ Կոթի Գիւղի մօտ գտնուող «Սուրբ Սարգսի ջուր» կոչուած աղբիւրը, ըստ աւանդութեան, փորել է տուել սուրբ Սարգիսը՝ բերդում պատսպարած իր հայ գերիներին ծարաւից փրկելու համար: Երբ աղբիւրը բխել է, Սուրբ Սարգիսը խաչակնքել է ու օրհնելով ասել. «*Ով որ գայ էս ջրից երեսովը տայ, ինչ հիւանդութիւն ունենայ, թողնելու ա*»[21]: Ըստ աւանդութեան՝ կատարուել է Սուրբ Սարգսի ցանկութիւնը, եւ այդ ջուրը օժտուել է բուժիչ յատկութիւններով:

ՋՈՒՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍՈՅԹՆԵՐՈՒՄ

Ժամանակակից հայերէնում, մասնաւորապէս ժողովրդախօսակցական լեզուում դեռեւս լայն շրջանառութեան մէջ են ջուր բառով կազմուած անէծքները, օրհնանք-բարեմաղթութիւնները, երդումները, որոնցում ջրի գերբնական զօրութեան նկատմամբ ըմբռնումը արտայայտում է երկու՝ միմեանց հակադիր հաւատալիքներ. օրհնանքներում ջուրը իր կենսատու զօրութեամբ, կեանք պարգեւողի նախնական բնապաշտական գիտակցմամբ խորհրդանշում է յաջողութեան, երկարակեցութեան, առողջ կեանքի բաղձանք, ինչպէս, օրինակ, «*Ջրի պէս երկէն արեւ ըլնիս*», «*Կեանքդ երկար լինի ջրի պէս*», «*Ջուրը էրթաս՝ օսկի դառնաս*», իսկ անէծքներում արդէն ջրի բացակայութեան կամ պակաս լինելու սրտի փափաքը արտայայտում է մահուան, փորձանքի, մարմնական եւ բարոյական տառապանքների ցանկութիւն. օրինակ՝ «*Սատկիս, ջուր տուող մի չելլի*», «*Ուրուշը հաց մուրա՝ դու ջուր մուրաս*», «*Ջրի կարօտով մնաս*» եւն.[22]: Ուշագրաւ է, որ «ջուր» բառով կազմուած որոշ արտայայտութիւններ, դարերի ընթացքում բանաձեւուելով ժողովրդի կողմից, վաղուց ձեռք են բերել դարձուածային կայուն

միաւորի արժէք եւ որպէս իմաստային պատրաստի միաւորներ՝ լայնօրէն գործածւում են գրականութեան տարբեր սեռերում եւ խօսքի տարբեր ոճերում, մասնաւորապէս ժողովրդախօսակցական լեզուում, ինչպէս, օրինակ, «*Ջրի բերածը ջուրը տանել*», «*Ջրի բերանն ընկնել*», «*Ջրի ճամփին կուժը կոտրել*», «*Ջրի պէս կարդալ*», «*Ջրի նման երկարել*», «*Ջրով անցնել*», «*Ջուրդ տաքցնեմ*», «*Ջուրը մի տեղ անել*», «*Երեսի ջուրը թափուել*», «*Լեղի ջուր խմել*», «*Ջուրը մաղել*», «Ջուրը տանի», «*Սեւ ջուր իջնել*», «*Ջուր կտրած*», «*Ջրի տակ անցնել*», «*Ջրի երես մնալ*» եւն.[23]:

ՋՈՒՐԸ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԾԻՍԱՍՈՎՈՐՈՅԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ջուրը նշանակալից դեր ունեցաւ նաեւ քրիստոնէական եկեղեցու սրբազան արարողութիւններում ու ծիսակարգում, որոնցում դարձեալ դժուար չէ նշմարել ջրի նախնական բնապաշտական առանցքային միջուկը: Ջրի պաշտամունքը, որ հեթանոսական է եւ գալիս է շատ հին հեթանոսական ժամանակներից[24], քրիստոնէական եկեղեցին չկարողացաւ ամբողջովին վերացնել: Նկատի ունենալով ժողովրդի մէջ ջրի պաշտամունքի լայն տարածուածութիւնը՝ քրիստոնէութիւնը, ջրին առնչուող հեթանոսական-հմայական բնոյթի հաւատալիքներին որոշակի ձեւափոխումներ մտցնելով ու դրանց քրիստոնէական երանգներ հաղորդելով, իր ծիսակարգերում պահպանեց հին աւանդոյթների շատ տարրեր:

Քրիստոնէական Վարդավառ տաղաւարային տօնի մասին վերեւում արդէն խօսք եղաւ: Ջուրը կարեւոր տեղ է զբաղեցրել նաեւ Սուրբ Ծննդեան տօնի ծիսասովորոյթային համակարգում, գիտակցուել որպէս պաշտամունքային առարկայ, որին վերագրուել են կախարդիչ, չարը հալածելու, հիւանդութիւն փարատելու բացառիկ յատկանիշներ: Օրինակ, հայկական շատ բնակավայրերում (Էջմիածին, Շիրակ, Բասէն) հաւատում էին, որ տօնին նախորդող ճրագալոյցի գիշերը բոլոր հոսող ջրերը միաժամանակ մի վայրկեան կանգ են առնում, եւ եթէ այդ պահին որեւէ իր դնեն ջրի մէջ, այն իսկոյն ոսկի կամ արծաթ կը դառնայ, իսկ եթէ քար դնեն, վերջինս ամէն տեսակի հիւանդութիւն բուժելու յատկութիւն կը ստանայ: Հաւատում էին, որ այդ գիշեր ջրերի հետ միասին անշարժանում են բոլոր առարկաները, ինչպէս նաեւ

խոտը, ծառը, քամին եւ օդը, որոնք սրբազան ջրերում ոսկու էին վերածւում[25]:

Իսկ ճրագալոյցի յաջորդ օրը՝ Ծննդեան առաւօտեան՝ պատարագից յետոյ, նշւում էր ջրօրհնէքի արարողութիւնը, որը Քրիստոսի մկրտութիւնը խորհրդանշող գլխաւոր ծէսն է, ու թէեւ պարզ արարողութիւն է, սակայն իբրեւ տօն է նկատւում, քանի որ Քրիստոսի մկրտութեան յիշատակութիւնն է[26]: «*Հանդիսաւոր թափօրը, սովորաբար*,- գրում է Ս. Մկրտչեանը,- *հաւաքւում էր գետերի մօտ, որտեղ կատարւում է խաչը ջուրը գցելու արարողութիւնը: Այդ ծէսը նշւում էր նաեւ եկեղեցիներում, ուր սեղանների վրայ սրբազան ջրով լիքը կաթսաներ էին դնում: …Օրհնուած ջուրը լցնում էին յատուկ շշերի կամ ամանների մէջ եւ տանելով տուն՝ քսում հիւանդների երեսներին ու յատկապէս վէրքերին՝ այն հաւատով, որ կը կանխուեն եւ կը վերացուեն բոլոր հիւանդութիւնները: Սրբազան այդ ջրով լուանում էին նաեւ պղծուած ամանները (որոնց շներ, մկներ կամ այլ կենդանիներ էին կպել)…*»[27]:

Ջրի պաշտամունքի հետ կապուած քրիստոնէական ծէսերից են նաեւ խաչալուան, ոտնլուան, ջրհորի օրհնութիւնը եւն.[28]: Սրանցում եւս ակնառու է ջրի պաշտամունքը:

ՋՈՒՐԸ ՀԱՅ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԾԻՍԱՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ջուրը լայն կիրառութիւն է ունեցել եւ այսօր էլ ունի նաեւ հայ ընտանեկան-կենցաղային ծիսական համակարգում: Օրինակ, երկար ժամանակով հեռու ճանապարհ մեկնողի կամ որեւէ փորձութեան ընդառաջ գնացողի ետեւից ջուր են ցանում՝ ի նշան օրհնութեան ու յաջողութեան, որպէսզի նա որեւիցէ փորձանքի կամ դժբախտութեան չհանդիպի, հնարաւոր սպառնացող չարը հալածուի: Հայերի մօտ կենցաղավարող ծիսական աւանդոյթներից է նաեւ յանկարծակի վախեցածին անմիջապէս ջուր խմցնելը կամ վրան ջուր ցանելը. այս սովորութիւնը մեկնաբանւում է նրանով, թէ իբր ջուրը փարատում է վախը: Իսկ ազգագրագէտ Երուանդ Լալայեանը վկայում է, որ «*Ջաւախքում գերդաստանի ծերացած պետը իւր իշխանութիւնը յաջորդին յանձնելիս՝ լուանում է իւր ձեռները նրա ձեռների վրայ, որպէսզի իւր ձեռների բարաքաթը անցնի նրա ձեռներին*»[29], կամ տան մեծը մեռնելիս ոտքը լուանում, ջուրը լցնում էին թոնրի սնուածքը[30], որ տան յաջողութիւնը մնայ[31]:

Յայտնի է նաեւ, որ երկար մազ ունենալու նպատակը իրականացնելու համար հայերի մօտ տարածուած է եղել հետեւեալ շատ որոշակի հաստատուն գործողութիւնը. բաղնիքում երկար մազ ունեցողի գլուխը լուացած ջրով լուանում էին իրենց գլուխը[32]: Թերեւս այս իրողութիւնը եղել է հմայութիւն, որ, կորցնելով իր նախնական նշանակութիւնը, պահպանել է իր արտաքին կողմը՝ վերածուելով սնոտիապաշտութեան:

Ջուրը հայերի մօտ առանձնայատուկ տեղ է գրաւում նաեւ մահուան եւ յուղարկաւորութեան ծիսական համակարգում: «*Մահը, որ ծննդից յետոյ մարդու ֆիզիկական կեանքում կատարուող ամենացնցող երեւոյթներից է, վաղնջական ժամանակներից իսկ հիմք ու աղբիւր է ծառայել սնոտի ու առասպելական հարուստ ու բազմազան հաւատալիքների: Վերջիններիս վրայ աստիճանաբար զարգացել են պաշտամունքային զանազան ծիսակատարութիւններ…*»,- գրում է Սարգիս Յարութիւնեանը[33]:

Թաղման ծիսական արարողակարգում առաջինը դիալուացումն էր[34], որը աւելի յաճախ կատարւում էր քահանայի կողմից նախապէս օրհնուած ջրով[35]: Ժողովրդական պատկերացմամբ հանգուցեալը հանդերձեալ աշխարհ պիտի տեղափոխուէր մաքուր. եւ պատահական չէ, որ յատկապէս ոտները լուանալու ժամանակ - օրինակ, Բորչալուի Գաւառում, բարեմաղթում էր «*Քարդ քաղած ըլի, Հողդ մաղած ըլի, Աջու դասի արժան ըլես…*»[36], որով պատկերաւոր ակնարկւում էր հանդերձեալ աշխարհում հոգու գնալիք անխոչընդոտ ճանապարհը, հետեւաբար եւ արդար դատաստանը: Ուշագրաւ է եւ յաջորդող արարողութիւնը. «*Յետոյ լողացնողները* ***միմեանց ձեռքի ջուր են ածում, լուացում*** *եւ կուժը այդ տեղում գլխիվայր տնկում եւ երեք օր այդպէս թողնում*»[37] (ընդգծումը մերն է - Վ.Ա.): Գրեթէ նոյն արարողակարգն է եղել եւ Գողթն Գաւառում, միայն այն տարբերութեամբ, որ ննջեցեալին լողացնելուց յետոյ նոյն ջրով լուանալ էին տալիս *տան անդամների ձեռքերը*[38]: Իսկ Գանձակում, եթէ օրհնուած ջրից աւելանում էր, պահում էին, որ յաջորդ օրը ննջեցեալի շորերը լուանալուց յետոյ այդ ջրով սրբեն իրենց ձեռքերը[39]:

Դիալուացման արարողակարգում հետաքրքիր սովորոյթ են ունեցել նաեւ ջաւախքահայերը. հանգուցեալին լողացնելուց յետոյ նրա ազգականները, «*մանաւանդ երախտապարտները գնում, մեռելի վրայ մի մի «թաս» ջուր են ածում, որպէսզի վերջինս իւր*

էա՛մէակը-երախտիքը-հալալ անէ»[40]: Իսկ Վարանդայում, յուղարկաւորութեան յաջորդ օրը՝ «ինքնաւողին», երբ աւարտւում էին սգոյ բոլոր արարողութիւնները, եւ մինչ սգաւորները կը վերադառնային տուն, «*Մի կին ջուր է ածում գերեզմանի վրայ, որից բոլոր սգաւորները խմում են, կրծքերին քսում, երեսները լուանում, որպէսզի եթէ վախեցած են, վախն անցնի*»[41]: Ընդհանրապէս ընդունուած եւ տարածուած կարգ է եղել յուղարկաւորութիւնից կամ նրան յաջորդող մօտ օրերից մէկում ննջեցեալի շորերը լուանալը, «*որպէսզի «հոգին մաքուր եւ անարատ գնայ հասնի իւր տեղը*»[42]:

Ջրին առնչուող այս բոլոր արարողութիւններից՝ ելնելով սոյն յօդուածի նպատակներից, առաւելապէս հետաքրքիր է ձեռալուացման ծիսակարգը: Վերջինս այսօր՝ որպէս յուղարկաւորութեան կապուած երեւոյթ, առաւելապէս կենցաղավարում է հոգեհացի սեղան նստելուց առաջ, երբ ննջեցեալի տիրոջ հրաւէրով յուղարկաւորները գնում են սգատուն՝ հաց ուտելու: Այս արարողութեան մասին վկայութիւններ է տալիս Լալայեանը՝ Բորչալուի Գաւառի հայերի մասին պատմելով. «*Թաղման կարգն աւարտելուց յետոյ... ննջեցեալի տիրոջ հրաւէրով գնում են սգատուն, լուացւում ու նստում հաց ուտելու, այս հացը կոչւում է «ծնկահաց*»[43]: Իսկ գողթնեցիների՝ նոյն արարողակարգի կապակցութեամբ Լալայեանի նկարագրութիւնները աւելի մանրամասն են. «[Թաղումից յետոյ] *բոլորն յետ էին դառնում, ննջեցեալի տիրոջից հրաւիրուելով հոգուհացի: Գրեթէ բոլորն էին գնում: Տան դռան առաջ մի ծառայ աջ ձեռին մի սափոր, ձախին կոնկ բռնած, ուսին էլ մի սրբիչ ձգած ջուր էր ածում՝ որ յուղարկաւորողները ձեռները լուանան: Անմիջապէս ծալապատիկ նստում էին արդէն սփռած սփռոցների շուրջը եւ քահանայի օրհնութիւնից յետոյ սկսում ուտել*»[44]:

Այսօր էլ թաղման, նաեւ այգալացի, եօթնօրէքի, քառասունքի, տարելիցի եւ ընդհանրապէս մեռելոցների առթիւ գերեզման այցելածները, երբ վերադառնում են հանգուցեալի հարազատի տուն կամ սգատուն՝ հոգեհացի կամ յիշատակի ծիսային ճաշկերոյթի, մինչեւ սեղան նստելը ձեռքները լուանում են: Հայերի մօտ կենցաղավարող այդ խորհրդանշական գործողութիւնը չնչին փոփոխութիւններով մնացել է նոյնը՝ բացառութեամբ, թերեւս, միայն այն տեսանելի տարբերութեան, որ ջուրը սովորաբար լցնում

են հանգուցեալի դեռահաս հարազատները, աւելի յաճախ՝ աղջիկները:

Թերեւս միանգամից կարելի է մտածել, թէ ձեռալուացման այս երեւոյթը մաքրակեցութիւնից բխող, առողջապահական նկատառումներ ունեցող, անհրաժեշտաբար կատարուող գործողութիւն է: Առերեւոյթ, իհարկէ, քանի որ ծէսերը յաճախ նաեւ, ինչպէս գրում է Լալայեանը, «*յառաջանում են բնական ճանապարհով եւ ոչ թէ մտադրուած սիմուոլականութեամբ*»[45]: Այս դէպքում, սակայն, սոսկ այսպէս ընկալելը, գուցէ մակերեսային ու պարզունակ հնչի, իսկ մեր տուած բացատրութիւնը գուցէ փոքր-ինչ բռնազբօսիկ թուայ: Սակայն ենթադրում ենք, որ ձեռալուացման յիշեալ արարողութիւնը կարող է կապուած լինել Քրիստոսի դատավարութեան ընթացքում Պիղատոսի ձեռքերը լուանալու յայտնի դրուագի հետ, որտեղ Պիղատոսը, հասկանալով Քրիստոսի անմեղութիւնը, հրաժարւում է Աստուածորդուն դատել եւ պատասխանատուութիւնից խուսափելու համար Քրիստոսին ամբոխի ձեռքը յանձնելուց առաջ, դիմելով արիւնահեղութեան մէջ անմեղութիւնը խորհրդանշող հին հրէական սովորոյթին[46], ձեռքերը լուանում է ու ասում. «*Ես այդ արդարի արիւնից անմեղ եմ, դուք տեսէք*»[47]: Ձեռքերը լուանալով սեփական անձի վրայից պատասխանատուութիւնը հանելու, մէկի մահուան համար պատասխանատուութիւն չկրելու ծիսական արարողութիւնը, դեռեւս մինչեւ Պիղատոսը կար հրեաների օրէնսդրութեան մէջ: Հին Կտակարանի «Երկրորդ Օրինաց» գրքում սահմանւում է հետեւեալ կարգը. քաղաքի պաշտօնեաները, ովքեր առաւել մօտ էին գտնուել սպանուածի դին յայտնաբերելու վայրին, սպանութեան բացայայտուած չլինելու դէպքում պէտք է որպէս անմեղութեան երաշխիք հանրութեան ներկայութեամբ վիզը կտրած երինջի դիակի վրայ լուանային իրենց ձեռքերը[48]: Ժամանակի ընթացքում, կարելի է ենթադրել, որ այդ ծէսը աստիճանաբար մթագնել է իր սկզբնական նշանակութիւնը եւ կրել նաեւ արտաքին կառուցուածքային զգալի փոփոխութիւններ, սակայն որոշակի խաւարումներով հանդերձ՝ վերապրուկային ձեւով պահպանուել է եւ արդէն կերպարանափոխուած հասել Պիղատոսի ու Քրիստոսի ժամանակները: Իսկ յետագայում, հայ ժողովուրդը Սուրբ Գրքի այդ միջադէպը առել, գործադրութեան մէջ հետզհետէ կրճատել ու նեղացրել է նրա սկզբնական բնոյթը,

սակայն ծիսական կիրառման մէջ պահել է էականը՝ անմեղութեան գաղափարը, եւ այն բերել պատուաստել է մահուան եւ յուղարկաւորութեան ծիսական համակարգին եւ զանգուածայնացրել: Ինչպէս նախկինում, այնպէս էլ այժմ, կարծում ենք, յատկապէս յուղարկաւորութեանը, այգալացին, եօթնօրէքին, քառասունքին, տարելիցին յաջորդող հոգեհացից առաջ աւելի յաճախ ակամայ իրականացուող ձեռալուացման արարողութիւնը հայերի մօտ ունի այն խորհուրդը, որ ձեռքերը լուացողը իր այդ գործողութեամբ երաշխաւորում է, որ ինքն անմասն է հանգուցեալի մահուան համար պատասխանատուութիւնից, ինքը որեւէ մեղք չունի վերջինիս մահուն մէջ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ջուրը, որ իր բնական կենսապարգեւ, իրական մարմնաւոր սնուցիչ ու մաքրող-լուացող լինելու յատկանիշների շնորհիւ դեռ նախնադարեան մարդու կողմից սրբացուել է, դարձել պաշտամունքի առարկայ, յետագայում կապուել է կրօնի առաւել զարգացած ձեւերի ու աշխարհայեացքի հետ, գիտակցուել նաեւ որպէս հոգեւոր սնուցիչ: Ջրի պաշտամունքը էական տեղ է զբաղեցրել նաեւ հայոց մէջ. հայկական հաւատալիքների եւ առհասարակ հայ ժողովրդական բանահիւսութեան մէջ բազմիցս է յիշատակւում ջուրը, նշանակալից է նրա դերը հայ եկեղեցու սրբազան բազմաթիւ արարողութիւններում ու ծիսակարգում: Ջուրը լայն կիրառութիւն է ունեցել եւ այսօր էլ առանձնայատուկ տեղ է գրաւում հայոց ընտանեկան-կենցաղային ծիսական համակարգում:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Ղեւոնդ Ալիշան, *Հին Հաւատք Կամ Հեթանոսական Կրօնք Հայոց,* Վենետիկ- Ս. Ղազար, 1910, էջ 59:

[2] Երուանդ Լալայեան, «Ջրի Պաշտամունք», *Ազգագրական Հանդէս, Բ. Գիրք*, թիւ 2, Թիֆլիս, Տպ. Մ. Դ. Ռոտինեանց, 1897, էջ 196-198. նաեւ՝ *VI Գիրք*, Թիֆլիս, Տպ. Մ. Դ. Ռոտինեանց, 1900, էջ 331-332. նաեւ՝ *X Գիրք*, Թիֆլիս, Տպ. Մ. Դ. Ռոտինեանց, 1903, էջ 182-183. նաեւ՝ *XVII Գիրք*, Թիֆլիս, Տպ. Մ. Դ. Ռոտինեանց, 1908, էջ 86-87:

[3] Արամ Ղանալանեան, *Աւանդապատում*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱՀ, 1969, էջ ԽԷ-ԽԸ:

[4] Արամ Ղանալանեան, *Առածանի*, Երեւան, ՀՍՍՌ ԳԱՀ, 1960, էջ XXXI-XXXII:

[5] Մանուկ Աբեղեան, *Երկեր, Հտր. Ա.*, Երեւան, ՀՍՍՀ ԳԱՀ, 1966, էջ 68-69:

[6] Նոյն, էջ 69: Այդ մասին տե՛ս նաեւ՝ Մաղաքիա Օրմանեան, *Ծիսական Բառարան*, արեւմտահայերէնից փոխ.՝ Ի. Աւետիսեան, Ռ. Նազարեան, Երեւան, «Հայաստան» Հրատ., 1991, էջ 40:

[7] Խաչիկ Սամուէլեան, «Սիմբոլը Հայ Սովորոյթներում», *Ազգագրական Հանդէս, XXII Գիրք*, թիւ 1, Թիֆլիս, Տպ. Մ. Դ. Ռոտինեանց, 1912, էջ 242:

[8] Ալիշան, *Հին Հաւատք*, էջ 62, 300-305. նաեւ՝ Խաչիկ Սամուէլեան, *Հին Հայաստանի Կուլտուրան, 1ին Հտր.*, Երեւան, ՍՍՌՄ ԳԱ, 1931, էջ 181-182, 186. նաեւ՝ Մանուկ Աբեղեան, *«Վիշապներ» Կոչուած Կոթողներն Իբրեւ Աստղիկ-Դերկետօ Դիցուհու Արձաններ*, Երեւան, Արմֆան, 1941, էջ 76. նաեւ՝ Ս. Ս. Մկրտչեան, *Տօներ: Հայկական Ժողովրդական Ծէսեր, Սովորոյթներ, Հաւատալիքներ (Աւանդոյթ եւ Արդիականութիւն)*, Երեւան, «Գասպրինտ», 2010, էջ 97-98:

[9] Աբեղեան, *Երկեր*, *Հտր. Ա.*, էջ 78:

[10] Նոյն, էջ 79:

[11] Նոյն, էջ 415:

[12] Նոյն, էջ 406:

[13] Նոյն:

[14] Նոյն, էջ 407-408. նաեւ՝ Սարգիս Յարութիւնեան, *Բանագիտական Ակնարկներ*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 2010, էջ 156:

[15] *Սասնայ Ծռեր, Ա. Հտր.*, խմբ. Մանուկ Աբեղեան, աշխատակց.՝ Կարապետ Մելիք-Օհանջեան, Երեւան, Հայպետհրատ, 1936, էջ 533-535:

[16] Աբեղեան, *Երկեր*, *Հտր. Ա.*, էջ 431:

[17] Նոյն, էջ 408-409:

[18] Ղանալանեան, *Աւանդապատում*, էջ ԽԸ:

[19] Նոյն, էջ ԽԸ-ԾԴ:

[20] Ջրի պաշտամունքին վերաբերող ժողովրդական բազմաթիւ աւանդութիւններ կան գրառուած *Ազգագրական Հանդէս*ի տարբեր հատորներում (Երուանդ Լալայեան, «Ջրի Պաշտամունք», էջ 196-198, *Գիրք VI*, 1900, էջ 331-332, *Գիրք X*, 1903, էջ 182-183, *Գիրք XVII*, էջ 86-87:

[21] Ղանալանեան, *Աւանդապատում*, էջ 103:

[22] Մէջբերուած օրհնանք-անէծքների բոլոր օրինակները առնուած են Սարգիս Յարութիւնեանի *Անէծքի եւ Օրհնանքի Ժանրը Հայ Բանահիւսութեան Մէջ* գրքից, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ, 1975, 270 էջ:

[23] Աշոտ Սուքիասեան, Սերգէյ Գալստեան, *Հայոց Լեզուի Դարձուածաբանական Բառարան*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1975, էջ 506-510. նաեւ՝ Պետրոս Բեդիրեան, *Հայերէն Դարձուածքների Ընդարձակ Բացատրական Բառարան*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2011, էջ 1113-1126: Մէջբերուած դարձուածների իմաստների բացատրութիւնը տե՛ս՝ նոյն տեղում:

[24] Աբեղեան, *Երկեր*, *Հտր. Ա.*, էջ 69:

[25] Տե՛ս Քաջբերունի, «Տօներ», *Ազգագրական Հանդէս*, *VII* եւ *VIII* գրքեր, Թիֆլիս, Տպ. Մ. Դ. Ռոտինեանց, 1901, էջ 118-119:

[26] Օրմանեան, էջ 38:

[27] Մկրտչեան, էջ 35-36:

[28] Նոյն, էջ 11:

[29] Երուանդ Լալայեան, «Ծիսական Կարգերը Հայոց Մէջ», *Ազգագրական Հանդէս, թիւ 21*, Թիֆլիս, Տպ. Մ. Դ. Ռոտինեանց, 1911, էջ 187:

[30] *Սնուածք* - խողովակաձեւ անցք՝ գետնի երեսից հողի տակով դէպի թոնրի ներքեւը անցնող, որի միջով օդ է անցնում եւ բորբոքում թոնրի կրակը (Ստեփանոս Մալխասեանց, *Հայերէն Բացատրական Բառարան, Հտր. 4*, Երեւան, ՀՍՍՌ Պետ. Հրատ., 1944, էջ 237):

[31] Լալայեան, «Ծիսական Կարգերը», էջ 187:

[32] Յարութիւնեան, *Անէծքի Եւ Օրհնանքի*, էջ 116-117:

[33] Նոյն, էջ 243:

[34] Նոյն, էջ 243:

[35] Երուանդ Լալայեան, «Մահ, Թաղումն Եւ Մեռելոց», *Ազգագրական Հանդէս, Դ. Գիրք*, թիւ 1, Թիֆլիս, 1898, էջ 243. նաեւ՝ *Զ. Գիրք*, թիւ 6, Թիֆլիս, 1900, էջ 321. նաեւ նոյնի՝ «Թաղումն Եւ Մեռելոց», *Ազգագրական Հանդէս, XII Գիրք*, Թիֆլիս, 1904, էջ 144 եւն.:

[36] Երուանդ Լալայեան, «Մահ, Թաղումն Եւ Մեռելոց», *Ազգագրական Հանդէս, X* Գիրք, էջ 169: Ուշագրաւ է, որ գրեթէ նոյն բարեմաղթանքն է ասուել նաև Գանձակում (տե՛ս նոյնի՝ «Մահ, Թաղումն Եւ Մեռելոց», *Ազգագրական Հանդէս, Զ. Գիրք*, էջ 321-322:

[37] Լալայեան, «Մահ, Թաղումն», *Ազգագրական Հանդէս, X Գիրք*, էջ 169:

[38] Երուանդ Լալայեան, «Թաղումն Եւ Մեռելոց», *Ազգագրական Հանդէս, XII Գիրք,* էջ 144:

[39] Երուանդ Լալայեան, «Մահ, Թաղումն Եւ Մեռելոց», *Ազգագրական Հանդէս, Զ. Գիրք*, էջ 322:

[40] Երուանդ Լալայեան, «Ընտանեկան Բարք, Մահ, Թաղումն Եւ Մեռելոց», *Ազգագրական Հանդէս, Ա.* Գիրք, Շուշի, Տպ. Մ. Մահտեսի-Յակոբեանց, 1896, էջ 309:

[41] Երուանդ Լալայեան, «Մահ, Թաղումն Եւ Մեռելոց», *Ազգագրական Հանդէս, Բ. Գիրք*, Թիֆլիս, 1897, էջ 183:

[42] Երուանդ Լալայեան, «Մահ, Թաղումն Եւ Մեռելոց», *Ազգագրական Հանդէս, Դ. Գիրք*, թիւ 2, Թիֆլիս, 1898, էջ 104:

[43] Երուանդ Լալայեան, «Մահ, Թաղումն Եւ Մեռելոց», *Ազգագրական Հանդէս*, թիւ X, էջ 176: Ցաւօք, մեզ չյաջողուեց ձեռալուացման այդ ծիսակարգի մասին գտնել աւելի վաղ յիշատակումներ կամ գրառումներ:

[44] Երուանդ Լալայեան, «Թաղումն Եւ Մեռելոց», *Ազգագրական Հանդէս, XII* Գիրք, էջ 146: Ուշագրաւ է, որ այս սովորութիւնը չի գործել մշեցիների մօտ (Երուանդ Լալայեան, «Մուշ-Տարօն. Ազգագրութիւն», *Ազգագրական Հանդէս, XXVI Գիրք*, թիւ 26, Թիֆլիս, 1916, էջ 192:

[45] Լալայեան, «Ծիսական Կարգերը Հայոց Մէջ», *Ազգագրական Հանդէս*, էջ 176:

[46] Տե՛ս https://hy.wikipedia.org/wiki/:

[47] Աստուածաշունչ, Աւետարան ըստ Մատթէոսի, գլուխ ԻԷ, 24-25 տողեր:

[48] Տե՛ս Աստուածաշունչ, «Երկրորդ Օրինաց» գիրք, գլուխ ԻԱ, 1-10 տողեր. նաեւ՝ Քեշիշեան Ա., *Աստուածաշնչեան Դարձուածքների եւ Արտայայտութիւնների Հայերէն-Անգլերէն-Ռուսերէն Բացատրական Բառարան*, Երեւան, «Ֆենոմէն» Հրատ., 2014, էջ 359:

WATER IN ARMENIAN BELIEFS AND HOUSEHOLD RITES
(Summary)

VACHAGAN AVAGYAN
avagyan.vachik@yandex.ru

Water is a natural, life-giving, and purifying nutrient. Due to these features water has been sanctified, and given a cult status since ancient times. More recently it has been connected with more developed religions and mentality. Water has been seen as a spiritual nutrient too.

The cult of water has had an essential role in Armenian mentality too. Water is mentioned a lot in Armenian beliefs and abundantly in Armenian folklore. It has a considerable role in various sacred ceremonies and rituals of the Armenian Church. Water was and is still commonly used, specifically in the sphere of Armenian domestic and household rituals.

In this article the author mainly highlights the rite of hand-washing which takes place after the burial ceremony and before heading to the place of mourning. The author argues that the rite of hand-washing may have a connection with Pilate's hand-washing during Christ's trial. According to the author, the phenomenon has undergone some changes but has maintained the essential idea that by washing their hands those in the burial procession proclaim their innocence in relation to the death of the defunct.